«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչին համապատասխան

Հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Արևաբույր գյուղի «Արևիկ» մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Կարինե Խուդավերդյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
2. Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների պլանավորման սկզբունքները.....5
3. Երեխաների հետ դաստիարակի համատեղ գործունեության պլանավորումը.....6
4. Պարապմունքների բնույթը.....7
5. Զբոսանքների պլանավորում.....7
6. Աշխատանքի կազմակերպման ձեվեր, որոնք կարելի է պլանավորել և առաջին կեսում, և երկրորդ կեսում.....8
7. Դաստիարակության և ուսուցման խնդիրները.....9
8. Ծրագրի կառուցվածքը և հիմնական առանձնահատկությունները.....11
9. Ուսումնադաստուարակչական աշխատանքի պլանավորման որակի վերլուծություն.....13
10. Եզրակացություն.....15
11. Գրականության ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկապարտեզի կրթական մեթոդները. Մանկապարտեզ ընտրելիս կան բազմաթիվ ասպեկտներ, որոնք ազդում են ընտրութըան վրա ներառյալ հարմարությունները հիգիենան, բուժումը, թափանցիկությունը: Այնուհետև խորհուրդ է տրվում նաև վերլուծել մեկ այլ շատ կարևոր կետ,որը հստակ տարբերակում է որոշ տնկարաններ մյուսներից մանկապարտեզի կրթական մեթոդները:

Ո՞րն է մանկապարտեզում կրթական մեթոդը:

Մենք կրթական մեթոդն անվանում ենք մեր կողմից օգտագործվող փաստաթղթերի խմբավորում ինցիպես նաև մեր կողմից կիրառվող ռազմավարություն, որպեսզի երեխաները հասնեն կրթության տեսանկյունից՝ իրենց տարիքի և անհատական հատկությունների հինման վրա Մեթոդի հատուկ գործողություններ սկսելուց առաջ առաջին բանը, որ պետք է դա սկսել դիտարկման փուլից, որը սովորաբար համնկնում է հարմարվողության ժամանակաշրջանում յուրաքանկյուր երեխայի ինքնուրույն մոտեցում ցուցաբերելով:

Կրթական մեթոդի մշակում

0-ից 3 տարեկան երեխաներն ունեն ունեն 3 ոլորտ, որոնք հիմնարար են իրենց զարգացման համար

1) Անձնական գիտելիքների ոլորտը որտեղ երեխան պետք է իմանա իր հնարավորությունները ունենա իր դրական կերպարը, իմանա ինչպես կիրառել իր հմտությունները օրեցօր ճանաչել զգացմունքները

2) Շրջակա միջավայրի իմացություն. երեխան պետք է իմանա իր շրջապատող միջավայրը տարբերությունները, սոցիալական տարբեր փոխհարաբերությունները իրավիճակը ուրիշների առջև կարեկցանք շրջապատի հետ փոխազդեցություն բնության կարևորություն…

3) Լեզուն. Այս ոլորտում երեխան պետք է ճանաչի լեզուների տարբեր տեսակներ ինչպիսիք են բանավոր ժեստերը, արտահայտությունները բարելավելով իրենց շրջապատող աշխարհի առնչվելու և ինքն իրեն հասկանալի դարձնելու ունակությունը:

Ինչպես նաև

.Կարևորում է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում:

Երեխայի բնականոն զարգացումը և որակյալ նախադպրոցական կրթությունը մեծապես պայմանավորում են հետագա հաջողություններն ու անհաջողություններն կրթական բոլոր մակարդակներում նպաստում նրա կարողությունների զարգացմանը՝ միջավայրում հարմարվելու և սոցիալական հարցերում:

.Նախադպրոցակիան տարիքը երեխայի զարգացման այն ժամանակահատվածն է, երբ ձևավորվում է նրա՝ որպես քաղաքացու հոգևոր, մտավոր և ֆիզիկական որակները: Այս շրջանի առանձնահատկությունն այն է, որ ապահովում է ընդհանուր զարգացում ի տարբերություն մյուս փուլերի, երբ զարգացումն ունի առավել ուղղորդված բնույթ երեխայի բնականոն և համակողմանի զարգացման ապահովման տեսանկյունից մեծ է նախադպրոցական կրթության համակարգի դերը:

Կրթադաստիարակչական գործնթացի պլանավորումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Դաստիարակի գործունեությունը կանոնակարգվում է օրենսդրական և իրավական փաստաթղթերով, ինչպես նաև ուսումնական հաստատության ներքին լոկալ ակտերով՝ տվյալ տեսակին համապատասխան:

.երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

.ՀՀ Սահմնադրություն

.ՀՀ աշխատանքային օրենսգիրք

.Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք

.Նախադպրոցական կրթության զարգացման ռազմավարության ՀՀ պետական ծրագրի ինչպես միջնաժամկետ, այնպես էլ հեռանկարային

.Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն

.Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կադրերի տարիֆաորակավորման բնութագրեր

.Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներ

.Նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանիտարական նորմեր և կանոններ

.Մանկապարտեզի ներքին աշխատակարգի կարգապահական կանոններ

.Մանկապարտեզի լոկալ ակտեր աշխատանքային պայմանագիր ,պաշտոնային հրահանգներ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

.Որոշել երեխաների ուսումնական բեռնվածության օպտիմալ տարբերակը,

.կանոնակարգային պահերին հաշվի առնել ներկայացվող պահանջները՝ պահպանելով հաջորդականությունը, տևողությունը, տարբեր գործնթացների անցկացման առանձնահատկությունները,

.Հաշվի առնել բնակլիմայական ,եղանակային պայմանները,

.Ապահովել երեխաների համար հատուկ կազմակերպված և ինքնուրույն գործունեության հերթագայումը,

.Պարտադիր ժամանակ հատկացնել ազատ խաղերին,

.Հաշվի առնել երեխաների զարգացման մակարդակը,

.Հաշվի առնել երեխաների դիտարկման արդյունքները շաբաթական պարապմունքների պլանավորման և համակցման ժամանակ,

.Հաշվի առնել երեխաների զարգացման մակարդակը, դիտարկման արդյունքները օգտագործել կրթական գործընթացի օպտիմալացման, անհատական աշխատանքների պլանավորման ժամանակ,

.Ապահովել դաստիարակության, ուսուցման և զարգացման գործընթացի փոխադարձ կապը,

.Կիրառել գործունեության տարբեր տարրեր՝ երեխաների հուզական բարենպաստության, տրամադրության բարձրացման նպատակով,

.Պլանավորման գործունեությունն իրականացնել երեխաների հետ աշխատող բազմամասնագետ կադրերի ջանքերի ինտեգրմամբ՝ հաշվի առնելով նրանց խորհուդները,

.Երեխաների հետ աշխատանքներ իրականացնելիս հաշվի առնել հաստատության նախատեսված տարեկան խնդիրները,

.Ներառել ծնողների հետ տարվող աշխատանքները:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների Օրացուցային պլանավորման ալգորիթմ

.Տիտղոսաթերթ,

.Խմբերի երեխաների ցուցակը,

.Խմբերի շաբաթական պարապմունքների, տեղաբախշման ցանկը՝ կրթական ծրագրերին համապատասխան,

.Մարմնամարզության պլանավորում,

.Պարապմունքների պլանավորումը՝ ամսաթվի, շաբաթվա օրվա, ամսվա, տարեթվի նշումով,

.Երեխաների հետ դաստիարակի համատեղ գործունեության պլանավորումը,
.Երեխաների ինքնուրույն գործունեության պլանավորումը,
.Մտավոր և շարժունակ գործունեության ծանրաբեռնվածության ռեժիմը, անվտանգության գծով միջոցառումները,
.Ծնողների հետ տարվող աշխատանքը,
.Մասնագետների խորհրդատվությունը:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Երեխաների հետ դաստիարակի համատեղ գործունեության պլանավորումը պարտադիր նախատեսում է կազմակերպված ուսուցման հետ փոխադարձ կապ: Հենց այդ գործունեության ընթացքում մեծը նախապատրաստում է երեխաների գիտելիքների յուրացմանը պարապմունքների ընթացքում: Բացի այդ, դաստիարակն այս գործունեությունը լրացնում է այն բովանդակությամբ, որը նրան չի հաջողվել անել պարապմունքների ընթացքում: Հենց համատեղ գործունեության ընթացքում է դաստիարակն աշխատում երեխաների պատկերացումների, կարողությունների ամրապնդման, հստակեցման ուղղությամբ:

Երեխաների հետ դաստիարակի համատեղ գործունեության պլանավորումը նպատակահարմար է նշել կանոնակարգային պահերի հատվածներին համապատասխան՝ առավոտ, զբոսանք, օրվա 1-ին կես, օրվա 2-րդ կես:

Առավոտյան ժամանակահատվածն ընդգրկում է.
.Խաղային գործունեություն,
.Զրույց երեխաների հետ,
.Առարկաների,պատկերազարդ նյութերի դիտում
.Անհատական աշխատանք,
.Կարճատև դիտումներ՝ ուղղված բնության և հասարակական կյանքի երևույթներին:

Առավոտյան պլանավորում են կարճատև զրույցներ ինչպես երեխաների խմբի, այնպես էլ առանձին երեխաների հետ, և նախապես ընտրված թեմաների շուրջ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Եթե պարապմունքներն ունեն հանգիստ բնույթ, որոնք երեխաներից պահանջում են մտավոր ակտիվություն և նստակեցություն, ինչպես օրինակ՝ տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման պարապմունքը, որանավորի ուսուցում, վերապատմումը, ապա առավոտյան պլանավորվում է երեխաների հետ գործունեության այնպիսի տեսակ, որն առաջացնում է ֆիզիկական ակտիվություն: ԵՎ հակառակը՝ եթե պարապմունքները կանխատեսում են մեծ շարժունակություն, ապա առավոտյան պլանավորող գործունեության բնույթը պետք է լինի հանգիստ:

Առավոտյան ժամերին գործունեության տեսակների թիվը կազմում է՝ կրտսեր և միջին խմբերում ՝ 3-4, ավագ խմբերում՝ 4-6 տեսակ:

Զբոսանքների պլանավորում

Օրվա կանոնակարգում յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսվում է 2 զբոսանք ՝ բացառությամբ կարճաժամկետ ռեժիմի:

Օրվա 1-ին կեսում զբոսանքի նպատակն է՝ վերականգնել երեխաների ուժերը պարապմունքներից հետո և առավելագույնս ստանալ դրական լիցքեր:

Զբոսանքի ընդհանրական կառուցվածքը.

.Եթե զբոսանքից առաջ եղել է ֆիզկուլտուրա ,երաժշտություն ,ապա զբոսանքը սկսվում է դիտումով:

.Եթե զբոսանքից առաջ եղել է հանգիստ գործունեություն, ապա զբոսանքը սկսվում է շարժողական գործունեությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐԵԼԻ Է ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ, ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍՈՒՄ

Երեխաների կյանքի և գործունեության անվտանգության պահպանման ուղղությամբ աշխատանքի կազմակերպման ձևեր և մեթոդներ:

.Ծանոթացում գեղարվեստական գրականությանը:

Երեխաների համար ընտրվում է գրականություն, որտեղ մատչելի ձևով ներկայացվում են երեխաների կյանքի և գործունեության անվտանգության կանոնները: Երեխաների համար ընթերցվում է հեքիաթներ, որոնցում առկա են անվտանգության կանոնների խախտման տարրեր:

.Անվտանգության, վարքի կանոնների ռիթմավորում:

.Նկարների, առարկայական սյուժետային նկարների, ալբոմների, վերատպությունների, մանրակերտների դիտում:

Նկարների դիտման ժամանակ երեխաներին պետք է հնարավորություն ընձեռվի գնահատել նկարում պատկերված՝ իրենց հասակակցի վարքը, պատմել, թէ ինչպես կվարվեին իրենք տվյալ իրավիճակում:

.Էքսկուրսիաներ, նպատակային զբոսանքներ:

.Մանկական արգասաբեր գործունեություն տեսակներ:

.Երեխաների հետ միասին պաստառների,մանրակերտների պատրաստում:

.Զրույցներ երեխաների հետ:

Վտանգավոր իրավիճակներում կեղծ ահազանգների դեպքում կանխարգելման, երեխաների վարքի դրսևորման ձևերը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կյանքի հինգերորդ տարին երեխայի օրգանիզմի աճման և զարգացման ինտենսիվ շրջանն է:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել երեխաների պատկերացումների ընդլայնմանը՝ մարդկանց գործունեության, շրջակա միջավայրի, առարկաների և բնության, հասարակական երևույթների վերաբերյալ, սովորեցնել տարանջատել առարկայի առանձին մասեր և բնութագրիչ հատկանիշներ, շարունակել զարգացնել ըստ այդ հատկանիշների՝ առարկաները համեմատելու, խմբավորելու կարողությունը: Այս ազպարեզում հիմնական խնդիրներն են՝

.Ձևավորել ընդհանրացված պատկերացումներ առարկաների և երևույթների մասին, սահմանել դրանցից մի քանիսի պարզագույն կապերը:

Բավարարել երեխաների պահանջները՝ կոնկրետ իրավիճակից դուրս մանկավարժի կողմից տեղեկատվություն ստանալու և քննարկելու ուղղությամբ Ցուցաբերել անմիջականություն երեխաների դատողությունների հանդեպ:

.Կատարելագործել երեխաների՝ սեփական գործողությունները պլանավորելու, որոշակի մտահաղացումներ իրականացնելու կարողություն, ձևավորել գործողության նպատակի, դրան հասնելու եղանակների մասին պատկերացումներ: Շարունակել երեխաների առողջության ամրապնդման, օրգանիզմի կոփման ուղղությամբ տարվող աշխատանքները. ապահովել ռեժիմի հստակ իրականացում:

.Դաստիարակել ճիշտ կեցվածք, ապահովել ֆիզիկական ներդաշնակ զարգացում:

.Ամրապնդել կուլտուր-առողջապահական և ինքնասպասարկման ունակությունները. շարունակել զարգացնել ինքնուրույնություն:

.Ծանոթացնել մոտ մարդկանց մասնագիտություններին՝ Ընդգծելով նրանց աշխատանքի կարևորությունը:

.Շարունակել հարստացնել երեխաների խաղերի բովանդակությունը. խրարուսել ինքնուրույն, փոքրիկ խմբերով խաղերը: Հղկել խոսքերը խաղի ժամանակ: Ձևավորել խնամքով վերաբերմունք խաղալիքների նկատմամբ:

Դաստիարակել սեր աշխատանքի նկատմամբ: Կատարելագործել ինքնուրույն և համատեղ աշխատելու, սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողություն:

.Ձևավորել հասակակիցների և մծերի հանդեպ հարգալից վերաբերմունք:

Սովորեցնել ճիշտ գնահատել ինչպես սեփական, այնպես էլ հասակակիցների արարքները: Տարբեր իրավիճակներում լինել հանդուրժող և համբերատար:

.Ձևավորել պատկերացումներ՝ զսպվածության, բարության հոգատարության, համարձակության վերաբերյալ: Սովորեցնել լինել արդար, ներողամիտ, միաժամանակ սխալ արարքի դեպքում դրսևորել ամոթի զգացում:

.Խուսափել երեխաների արարքների հրապարակավ քննադատությունից: Ավելի շատ խրարուսել և կոնկրետ նշել «թէ ինչու են արժանացել գովեստի:

.Շարունակել դաստիարակել սեր հայրենիքի,հայրենի տան, մանկապարտեզի հանդեպ: Ընդարձակել պատկերացումները շրջապատող առարկաների և երևույթների մասին: Կարողանալ գտնել պարզագույն կապեր դրանց միջև:

.Կարողանալ տարբերել առարկաների առանձին մասեր և բնութագրել դրանք, ինչպես նաև համադրել և համեմատել ըստ ձևի, գույնի և մեծության:

.Կարողանալ տարբերել առարկաների առանձին մասեր և բնութագրել դրանք ,ինչպես նաև համադրել և համեմատել ըստ ձևի, գույնի և մեծության:

.Ձևավորել պարզագույն գիտելիքներ՝ արտաքին միջավայրի որոշակի պայմաններից բուսական և կենդանական աշխարհի կախվածության մասին:

.Շարունակել զարգացնել խոսքը: Կատարելագործել հնչարտաբերումը, ընդարձակել ակտիվ բառապաշարը: Սովորեցնել պահպանել խոսքի քերականական ճիշտ կառուցվածքը: Զարգացնել խոսքի մենախոսության և երկխոսության ձևերը:

.Ձևավոնել ոտանավոր արտասանելու, հեքիաթ պատմելու, դրանք հուզականորեն վերարտադրելու ունակություններ: Օգնել երեխաներին՝ ակտիվ մասնակցելու առաջադրված թեմայով զրույցներին, կազմել փոքրիկ պատմություններ սեփական փորձի, խաղալիքի, թեմատիկ նկարի վերաբերյալ:

.Զարգացնել գեղարվեստագիտական, բարոյագիտական զգացմունքներն առօրյայում, խաղերում, բնության գրկում:

.Արթնացնել գեղարվեստական գործունեության տարբեր ձևերի հանդեպ հետաքրքրություն: Զարգացնել երաժշտական, բանաստեղծական լսողություն, գույնի, ռիթմի, ձևի զգացողություն:

.Զարգացնել արտահայտիչ արտասանելու, երգելու, պարելու, գեղարվեստական ստեղծագործության հերոսներին իրենց նկարներում և դերերում վերարտադրելու կարողությունը:

.Երեխաներին հաղորդակից դարձնել ժողովրդական ավանդույթներին, մշակույթին, պատմական իրադարձություններին, տոնակատարություններին: Դաստիարակել սեր հայրենի եզերքի, Հայաստան–աշխարհի, մայրաքաղաք Երևանի, հայրենի երկրի մշակույթի ճարտարապետական հուշարձանների, կենցաղի, մշակույթի, նրա անցյալի,

ներկայի պատմական իրադարձությունների հանդեպ:

.Նպաստել երեխաների համակողմանի զարգացմանը: Շարունակել զարգացնել ուշադրությունը, խոսքը, տրամաբանական մտածողությունը, հիշողությունը, երևակայությունը և կամային որակները:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի կրթության բովանդակության ընդհանուր կառուցվածքը, կանոնակարգաՄին պահերը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղություններին հատկացվող շաբաթական և տարեկան պարապմունքների քանակը, սաների շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, ակնկալվող արդյունքները՝ ըստ զարգացման ոլորտների ու գործունեության ձևերի:

Բոլոր բաժինների գծով ծրագրային նյութը տրված է ըստ եռամսյակների: Այդ կերպ հեշտացվում է նյութի հավասարաչափ բաշխումը, և իրացվում է կրկնության սկզբունքը:

Ծրագրում զետեղված են կրթադաստիարակչական գործնթացում կիրառվող գրական երաժշտական ստեղծագործությունների, շարժախաղերի, դիդարկտիկ խաղերի անվանացանկը և հանձնարարվող գրաֆիկական ցանկը: Ներկայացված են

տվյալտարիքային խմբի երեխաների հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունների բնութագիրը, դաստիարակուցման և ուսուցման ընդհանուր ու շեշտադրված հատուկ խնդիրները, երեխաների կյանքի և կենսագործունեության կազմակերպումը: Նախատեսված է հնարավոր պատկերացումների, կյանքում, առօրյայում և ուսուցման ընթացքում անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ձևավորումը: Ծրագրում մշակված է մանկական տոների, զվարճալիքների, ժամանցի բովանդակությունը: Շեշտադրված է նախադպրոցական հաստատությունում տարեվերջին երեխայի զարգացման ակնկալվող մակարդակը, տրված են կոնկրետ ձեռքբերումների արտացոլման չափանիշները:

Օգտագործված են նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժական, նորարարական մեթոդաբանության և տեխնոլոգիայի հիմունքները:

Նպատակն է երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ իրականացմանը և որպես աջակցություն դաստիարակներին՝ ուսումնական տարվա ընթացքում կրթադաստիարակչական գործնթացը պլանավորելու առավել նպատակաուղղված, մատչելի և համակարգված: Ուսումնական տարվա ընթացքում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների հեռանկարային պլանավորումը ըստ ծրագրի՝ ներկայացվում է հետևյալ բաղադրիչներով .

.երեխան և շրջակա աշխարհը

Առարկայական միջավայր: Հասարակական կյանքի երևույթներ:

Բնության հետ ծանոթացում: Տարրական էկոլոգիական պատկերացումների ձևավորում:

.Խոսքի զարգացում: Գեղարվեստական գրականություն

.Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորում

.Կառուցողական աշխատանք

.Երաժշտական պարապմունքներ

.ֆիզկուլտուրայի պարապմունքներ

Խմբում աշխատող դասիարակը, հաշվի առնելով սեփական փորձը, հենվելով երեխաների հնարավորությունների վրա, կարող է կողմնորոշվելով ներկայացված տարաբնույթ աշխատանքների հաջորդականությամբ, իր հայեցողությամբ իրականացնել պլանավորման որոշ փոփոխությունների և կատարել լրացումներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման վերլուծությունն իրականացվում է հետևյալ բնութագրիչներով .

1.Խումբը
2.Պլանին ներկայացվող պահանջները:
3.Պարապմունքների տեսակները:
4.Ձևակերպված է արդյոք ուսուցում-զարգացում-դաստիարակություն եռամիասնության նպատակը:
5.բնութագրվում են արդյոք յուրաքանչյուր խնդրի լուծման մեթոդները: 6.Շեշտադրվում է արդյոք երեխաների ուսուցման գործունեության հմտությունների ձևավորումը:
7.Պարապմունքների ժամանակ անհրաժեշտ պարագաների առկայությունը:
8.Ստուգողի առաջարկությունները:

Յուրաքանչյուր մանկապարտեզի տնօրեն կամ մեթոդիստ մանկավարժական խորհրդի առաջին նիստի ժամանակ դաստիարակների հետ համատեղ կորոշեն, թէ դաստիարակներն ինչպես կպլանավորեն իրենց աշխատանքները, պլանավորման որ մեթոդը կընտրեն: Հնարավոր է նաև, որ նույն մանկապարտեզում կիրառվի պլանավորման մի քանի տարբերակ: Այստեղ կարևորը պլանավորման և հաշվառման հիմնական սկզբունքներն ու չափանիշները պահպանելն է: Մեծ կարևորություն է տրվում դաստիարակի ազատ ստեղծագործական աշխատանքին:

Առաջին տարբերակը նման է պլանավորման վանդական ձևին՝ այն տարբերությամբ, որ այստեղ գործունեության յուրաքանչյուր տեսակ ներկայացվում է խմբավորված ողջ շաբաթվա համար հետևյալ բաժիններով `

.դիտումներ

.աշխատանք

.անհատական աշխատանք

.աշխատանք ծնողների հետ

.պարապմունքներ

.խաղ-զվարճալիքներ

Նախկինում պլանը բաժանվում էր հերկյալ ենթաբաժինների՝ առավոտ, զբոսանք, որոնց բաժիններում անընդհատ կրկնվում էին խաղ, աշխատանք, դիտում, անհատական աշխատանք, աշխատանք ծնողների հետ ենթաբաժինները:

Պլանավորման նոր ձևը դաստիարակին չի պարտադրում ամեն օր նշել, օրինակ, թէ ինչ խաղ պետք է խաղա երեխան: Պետք է հստակ նշենք մեկ բան՝ մենք իրավունք չունենք երեխաներին պարտադրել խաղալու այս, կամ այն խաղը: Դաստիարակը պետք է ընդամենը հետևի երեխայի խաղին և անհրաժեշտության դեպքում ուղղորդի: Անիմաստ է նաև ամեն օր առանձին-առանձին պլանավորել ծնողների, ինչպես նաև երեխաների հետ տարվող անհատական աշխատանքները: Ի դեպ, դրանք պլանավորվում են այն դեպքում, երբ դրա կարիքը կա: Պարապմունքները պլանավորելիս նախընտրելի է նշել թեման և նպատակը: Պարապմունքների ժամանակ կիրառվող անհրաժեշտ պարագաներին, եթե դրա կարիքը զգացվի, կարելի է նաև անդրադառնալ նաև հաշվառման ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանկապարտեզի կյանքի շարժիչ ուժերը՝ որպես մանկական համայնքի կազմակերպիչներ, դաստիարակներն են: Դաստիարակը ղեկավարվում ՝ է ծրագրով և այն կենսագործում է պլանավորման միջոցով: Նպատակաուղղվածության, պլանավորման, կանխատեսման, վերահսկման և արդյունքների ու դրանց հետևանքների գնահատման հիմունքների ուսուցումը կատարվում է խաղային և ոչ խաղային հնարների զուգորդման, դաստիարակի ու երեխաների միջև դերերի բախշման միջոցով:

Մանկապարտեզի ամբողջ առօրյան ձմեռ, թէ ամառ յուրահատուկ ձևով պետք է կազմակերպված լինի գործարար աշխուժությամբ և կենսուրախությամբ: Ստեղծվելու են ամենաբարենպաստ պայմանները երեխաների բազմազան գործունեության և բազմակողմանի զարգացման համար, և ահա այդ գործնթացը, իհարկե ուղղություն է ստանում և ղեկավարում դաստիարակի կողմից: Օրվա որոշակի ժամերի ընթացքում դաստիարակը երեխաների գործունեությունը կազմակերպում է ուղղակի և անմիջականորեն: Օրվա մյուս ժամերին երեխաները գործում են ինքնուրույն՝ առանց դաստիարակի անմիջական մասնակցության: Սակայն նրանք դաստիարակի ներկայությամբ խաղում են, պատրաստում ինքնաշեն խաղալիքներ, հերթապահում են և այլն: Մի խոսքով ինչով էլ զբաղվի երեխան, դաստիարակը նրա կոխքին է: Նա այդ գործունեության մասնակիցն ու դիտարկողն է: Մի շարք դեպքերում դաստիարակը կազմակերպիչ չէ, նա ընդամենը կատարող է՝ գործունեությանը մասնակցելով և ուղղորդելով այն, եթե դրա կարիքը կա:

«Մանկավարժական գործունեության պլանավորում» բաժնի բովանդակությունը պետք է ներկայացվի ընդհանուր միյասնական ուղղվածությամբ, որն իրականացվում է ինչպես պարապմունքների, այպես էլ երեխաների ազատ գործունեության ժամանակ: Այդպիսի պլանավորումը ներառում է աշխատանքի բովանդակությունը՝ թույլ տալիս իրականացնել համակարգված մոտեցում: Պարապմունքների ձևի ընտրությունն ըստ բաժինների սահմանում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան:

Օրինակ՝

.Եթե տվյալ թեման կարելի է մատուցել զբոսանքների, էքսկուրսիաների, խաղի, կամ խաղ–պարապմունքների ձևով, ապա այդ ընտրությունը կատարում է ինքը՝ դաստիարակը, որն ամրագրում է հնօրյա աշխատանքային շաբաթով գործող մանկապարտեզների 5-6տարեկան խմբերում, շաբաթական 15 պարապմունք բաժանվում է շաբաթվա օրերի վրա, և յուրաքանչյուր օր կազմակերպվում է 3-ական պարապմունք:

.Քանի որ շաբաթվա երկրորդ օրը իրար հետևից անց են կացվում մտավոր լարում

պահանջող երկու պարապմունքներ, ուստի նպատակահարմար է փոփոխություն մտցնել պարապմունքի նյութի պլանավորման մեջ

.եթե մեկ պարապմունքում տրվում է նոր նյութ, ապա հաջորդ պարապմունքը նվիրվում է դիդակտիկ խաղին,կամ հակառակը:

Քանի որ ծրագրով թույլատրվում է անցկացնել մեկ պարապմունք՝ դաստիարակի հայացողությամբ, ապա լրացուցիչ պարապմունքը պետք է կառուցվի՝հաշվի առնելով դրա բնույթը, ըստ որի կարելի է անցկացնել զուգակցված պարապմունքների ձևով, խաղային մեթոդի զուգորդմամբ, կամ օրվա 2-ռդ կեսին: Անհրաժեշտության դեպքում՝ ըստ պարապմունքի բնույթի, դրանք կարող են զուգակցվել և ընթացքում լուծել հիմնական և կողմնակի խնդիրներ: Հիմնական և լրացուցիչ պարապմունքները միմյանց հետ զուգակցվում են ոչ թէ կամայականորեն, այլ տվյալ պարապմունքներին բնորոշ նյութի համապատասխանությամբ, օրինակ՝ մայրենի լեզու, կերպարվեստ, երաժշտություն: Դաստիարակների աշխատանքային պլանը պետք է կազմվի երկու հերթի դաստիարակներիկողմից համատեղ,որովհետև նրանց դաստեարակության օբյեկտը նույն երեխաներն են: Հերթական պլանը կազմելիս դաստեարակները պետք է երեխաների նկատմամբ ունեցած իրենց դիտողությունների փոխանակում կատարեն,թէ ինչպես են երեխաները կատարել պարտականությունները, ինչպես և ում հետ են խաղացել: Անհրաժեշտ է նայել երեխաների աշխատանքները, ընթերցել դիտարկումների մասին գրանցումները: Մտքերի փոխանակման ընթացքում նրանք որոշում են, թէ ինչ է անհրաժեշտ վերցնել ծրագրից հաջորդ շաբաթվա պլանի համար:

Դաստիարակն իր մեջ պետք է միավորի և դիտողի, և մանկավարժի գործառույթները, որոնք անբաժանելի են միմյանցից: Նա պետք է հետևի իր խմբի երեխաների մտավոր զարգացման դինամիկային: Դաստիարակի հիմնական խնդիրն առաջադրանքների լուծման ճանապարհին ճիշտ կողմնորոշվելն է, քանի որ այդ խնդիրների լուծումը նպատակաուղղված է երեխաների զարգացմանը, առաջարկվող բովանդակության ընբռնմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հասմիկ Միտոյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համր», «Մարի հրատարակչություն» Երևան 2020

2. Մանկապարտեզի միջին խմբի /4-5 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր,

Երևան 2020